

5.9. Արտոնագրային գործունեությունը 2011թվականին

Ըստ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության տեղեկատվության, 2011թ. հանրապետությունում արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և ֆիրմային անվանումների) իրավական պահպանության հետ կապված գործունեությունն ունեցել է հետևյալ պատկերը.

5.9.1. Գյուտեր և օգտակար մոդելներ: 2011թ. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 140 գյուտի և 48 օգտակար մոդելի հայտ, որոնցից 166-ը՝ ազգային, 22-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Գործակալության գործունեության ընթացքում՝ 1992թ-ից մինչև 2011թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 3497: 2011թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը 2010թ. համեմատ նվազել է 11-ով: 2011թ. ազգային հայտատուների կողմից ներկայացվել են գյուտերի 4 միջազգային հայտեր: 1994-2011թթ. ընթացքում մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն է ուղարկվել 64 գյուտի հայտ:

Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից 2011թ. ներկայացվել է 6 հայտ:

2011թ. գործավարությունն ավարտվել է 200 հայտով, ընդ որում, 122 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 51 հայտով՝ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 24 հայտով՝ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին, 3 գյուտի (օգտակար մոդելի) հայտով՝ արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:

5.9.2. Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ: 2011թ. ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 1717 հայտ (1091-ը կամ 64.0%՝ ազգային հայտատուներից): 2010թ. համեմատ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակն նվազել է 13.8%-ով:

1680 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն: Հայտատուների կողմից հետ է կանչվել 5 հայտ, իսկ 110 հայտի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում: Գրանցվել են ապրանքային և սպասարկման 1562 նշաններ և կայացվել է ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին 1 որոշում:

2011թ. նշանների միջազգային գրանցման մասին մադրիդյան համաձայնագրի շրջանակում ՀՀ նշամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2985 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 450, իսկ վերջնական մերժման մասին՝ 443 միջազգային գրանցումներով: Ապրանքային նշանների միջազգային գրանցումներով կայացվել են 2820 որոշումներ ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ:

2011թ. գործակալություն է ներկայացվել 28 արդյունաբերական նմուշի հայտ, այդ թվում՝ 26 ազգային և 2 օտարերկրյա հայտատուներից:

5.9.3. Ֆիրմային անվանումներ: 2011թ. գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3281 հայտ: Գրանցվել է 2612 անվանում, մերժվել է 669-ը: Ֆիրմային անվանման մեջ «հայ», «Հայաստան», «հայկական» բառերի և դրանց թարգմանությունների օգտագործման համար տրվել է 16 թույլտվություն:

5.9.4. Հրապարակումներ: 2011թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի թվով 12 համար: Տեղեկագրերը հրապարակվել են հայերեն և ռուսերեն, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 112 գյուտի, 56 օգտակար մոդելի, 24 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1551 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների, 217 ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին, ինչպես նաև տեղեկություններ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների, գրանցված ֆիրմային անվանումների հայտերի, արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի մասին: Ապրանքային նշանի հայտի պաշտոնական հրապարակման և համընդհանուր ծանոթացման նպատակով տպագրվել է «Ապրանքային նշանի հայտեր» պաշտոնական տեղեկագրի թվով 24 համար:

5.9.5. Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: 2011թ. ընթացքում քննարկվել և գրանցվել է 75 պայմանագիր, որից 54-ը՝ ապրանքային նշանների զիջման, 18-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 2-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 1-ը՝ արտոնագրի բացառիկ լիցենզիա տալու մասին: Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ՀՀ իրավաբանական անձանց միջև:

5.9.6. Ֆինանսական ցուցանիշներ: 2011թ., որպես պետական տուրք, ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 323.0 մլն. դրամ, որի 69.5%-ը (224.4 մլն. դրամ)՝ ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների իրավական պահպանության, 3.0%-ը (9.6 մլն. դրամ)՝ ֆիրմային անվանումների իրավական պահպանության, 1.3%-ը (4.4 մլն. դրամ)՝ գյուտերի և օգտակար մոդելների իրավական պահպանության, 18.2%-ը (58.9 մլն. դրամ)՝ պետական գրանցամատյանների վարման, 6.2%-ը (20.0 մլն. դրամ)՝ զիջման մասին և լիցենզային պայմանագրերի գրանցման, 1.8%-ը (5.7 մլն. դրամ)՝ բողոքների քննարկման գծով: 2010թ. համեմատ գանձված գումարների չափն ավելացել է 39.4 մլն. դրամով:

Արտոնագրային գործունեության ցուցանիշները, 2007-2011թթ.

		<i>միավոր</i>				
		2007	2008	2009	2010	2011
Ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը		147	239	168	187	188
Ներկայացված արդյունաբերական նմուշների հայտերի քանակը		18	24	35	23	28
Ներկայացված ապրանքային նշանների հայտերի քանակը		1477	1443	1707	1959	1717
Ներկայացված ֆիրմային անվանումների հայտերի քանակը		4655	4111	3954	3882	3281
Տրվել է	գյուտի արտոնագիր	165	127	156	124	112
	օգտակար մոդելի արտոնագիր	11	11	30	41	56
	արդյունաբերական նմուշի արտոնագիր	25	13	23	22	24
	ապրանքային նշանի վկայագիր	1167	1189	1297	1499	1562
	գրանցված ապրանքային նշանի գատման մասին վկայագիր	-	-	-	-	2